

գործունեայ անդորրութիւն մըն է, ոչ թէ յոյլ եւ անդործ. ու զլիաւորապէս անդորրութիւն մըն է պատերազմող ընդդէմ ամէն տեսակ մոլորութեան, որ յաճախ ճշմարտութեան պատրիշ ու նենդ հանդերձին տակ իւր ծածկուի. անդորրութիւն մը պայքարող ընդդէմ ախտալարակ հրապոյրներու, ընդդէմ ամէն տեսակ հոգեկան թշնամիներու՝ որոնք կը ճղնին արատաւորել ու քանդել անմեղութիւնն ու մեր կաթողիկէ հաւաքը. մաքառող ընդդէմ ատելութեան, վէճերու, հակառակութիւններու, որ կրնան այդ հաւատքը բեկանել ու յօշոտել: Այս պատճառով է որ աստուածային Փրկիչը ի՛ր իսկ խաղաղութիւնը մեզի թողուց ու յանձնեց:

Սաղաղութիւնը, հետեւաբար, որուն հարկ է դիմենք եւ անպատճառ հասնինք՝ պէտք է ըլլայ այն խաղաղութիւնը, որ — ինչպէս ըսինք — ոչ մէկ մոլորութեան չի հաւանիր, եւ այդ մոլորութեանց հետեւողներուն հետ չի գործակցիր, ախտերու չի հակիր, եւ որ ամէն տեսակ տարաձայնութենէ վը խուսէ: Այս է խաղաղութիւնը, որուն հետեւորդները հարկ է պատրաստ ըլլան անձնական դիւրութիւններէ ու շահերէ իսկ հրաժարելու՝ ի սէր ճշմարտութեան եւ արդարութեան, հետեւելով Աւետարանին. «Ոնդրեցէք նախ զարքայութիւն Աստուծոյ եւ դարդարութիւն նորա» (Մատ. 2, 33):

Աստուածածին Կոյսը, թաղուհին խաղաղութեան, որու Անարատ Սրտին նուիրուած է համայն մարդկութիւնը՝ Մեր Երջանկայիշատակ Նախորդին Պիոս ԺԲ. Քահանայապետի կողմէ, թող ինքն ալ հայցէ Աստուծոյ — վը խնդրենք թախանձազին — այս համերաշխ միութիւնը, ճշմարիտ խաղաղութիւնը, գործունեայ ու զինուորեալ խաղաղութիւնը, թէ՛ անոնց համար որ մեր որդեակներն են ի Բրիտոս, եւ թէ՛ ամէն անոնց՝ որ թէեւ բաժնուած՝ սակայն չեն կրնար չտեսնչալ ճշմարտութեան, միութեան եւ համերաշխութեան:

1. Epist. «Saepenumero considerantes», A. L. III, 1883, 262. — 2. Epist. «Exeunte iam anno», A. L. III, 1888, 396. — 3. Enc. «Humanum genus», A. L. IV, 1884, 53. — 4. Epist. «Praelara gratulationis», A. L. XIV, 1894, 210. — 5. Epist. «Permoti Nos», A. L. XV, 1895, 259. — 6. Enc. «Rerum novarum», A. L. XI, 1891, 109. — 7. Radiomessaggio Natalizio 1944; Discorsi e radiomessaggi di S. S. Pio XII, vol. VI, 239. — 8. Radiomessaggio al 730 Congresso dei cattolici Tedeschi; Discorsi e radiomessaggi di S. S. Pio XII, vol. XI, 189. — 9. A. A. S. XXII (1931), 393-394. — 10. Per un solido ordine sociale; Discorsi e radiomessaggi di S. S. Pio XII, vol. VII, 350. — 11. Epist. «Inter graves», A. L. XI, 143-144. — 12. Enc. «Mortaliū omnes», A. A. S. XX (1928), 5 sq. — 13. J. H. Newman, Difficulties of Anglicans, vol. I, lect X, p. 261 sq. — 14. Epist. XLIII, 5; Corp. Vind. III, 2, 594. Cfr. Epist. XL, Migne PL. IV, 345. — 15. Hom. in mysticam caenam, PG. LXXVII, 1027. — 16. In Ps. 32, Enarr. II, 29; Migne PL. XXXVI, 299. — 17. In Ps. 82, Enarr. II, 14; Migne PL. XXXVII, 1140.

ԾԱՆՈԹ. ԽՄԲ. — Այս շրջաբերականը տակաւին ունի Զորքող մաս մը, որ Սրբ. Քահանայապետը կու տայ զանազան կարեւոր յորդորներ, ուղղութիւնով եպիսկոպոսներուն, քահանաներուն, կրօնաւորներուն, միանձնուհիներուն եւ աշխարհական դասակարգի զանազան խմբերուն: Պատշաճ համարեցանք այդ մասը վերապահել առանձին հատորիկին՝ որով լոյս պիտի տեսնէ սոյն կոնգակը իր ամբողջութեամբ:

## Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԶԻ

### ՁԵՌՆԱԴՐՈՒԹԵԱՆ ԹՈՒԱԿԱՆԸ ԵՒ ՊԱՐԱԳԱՆԵՐԸ

(Շար. տե՛ս «Բազմավեպ», 1959, թ. 1-2, էջ 9)

#### Յ. ՄԱՆԱՆԴԵԱՆԻ ԿԱՐԾԻՔԸ

Մանանդեան յատուկ կերպով Հայոց քրիստոնէութեան դարձի պատմութիւնը դրած չէ, սակայն իր քաղաքական պատմութեան ընթացքին՝ մանրազնին կերպով ուսումնասիրած է Տրդատ Բ.էն մինչեւ Տրդատ Գ.ի շրջանը, որ մեր հարցին ամբողջական լուսարանութեան համար շատ կարեւոր է: Բայց ինչ որ ուղղակի Տրդատ Գ.ի թագաւորութեան սկզբնաւորութեան եւ Հայոց քրիստոնէութեան դարձի թուականին կը վերաբերի՝ արդիւնք է նախորդ շրջանի նոր ուսումնասիրութեան. ասկից՝ իր հանած եղբակացութիւնն ալ բոլորովին նոր է: Իր կարծիքը այս մասին հիմնուած է զլիաւորաբար Սեբէոսի վերադրուած պատմութեան Գ. զուգահեռ եռանուն ցանկին վկայութեան վրայ, որուն համաձայն՝ Սոսրով Քաջ սպաննուած է «Ի չորրորդ ամին Դիոկղետիանոսի». իսկ Տրդատ, անոր որդին, թագաւոր եղած է «Ի հնգետասներորդ ամի Դիոկղետիանոսի» որ է 298ին: Եւ ընդունելով Սորենացիի վկայութիւնը Գրիգոր Լուսաւորչի ձեռնադրութեան համար՝ թէ «Յեւթնետասներորդ ամի Տրդատայ գտաք նստեալ յաթոռ սրբոյ Առաքելոյն թաղէոսի զնախահայրն մեր Գրիգորիոս», կ'ունենանք 315 տարին իբր Գրիգորի ձեռնադրութեան կամ Հայոց դարձին թուական: Մանանդեան այն կարծիքէն է որ Տրդատ քրիստոնէութիւնը ընդունած ըլլայ 313ի Միլանի վճիռէն վերջ, որով հռոմէական կայսրութեան մէջ քրիստոնէութիւնը թոյլատրուած կրօնք կը ճանչցուէր. վասնզի,

կը խորհրդածէ պատմադէտը, Հայաստան տերտորէն կապուած ըլլալով հռոմէական կայսրութեան՝ ենթակայ էր անոր ազդեցութեան նկատմամբ քրիստոնէութեան դէմ եղած հալածանքներուն կամ թոյլտուութեան<sup>37</sup>:

Ինչպէս նախորդ կարծիքներուն համար, հոս ալ Հայոց քրիստոնէութեան դարձի թուականը կախում ունի Տրդատի թագաւորութեան սկիզբի թուականէն: Եւ որովհետեւ Մանանդեանի ընդունած թուականը՝ 298, թէեւ հաստատուած Սեբէոսի վերադրուած պատմութեան վկայութեամբ, բայց ընդհանրացած կարծիքներէն շատ տարբեր ըլլալուն, հարկ է աւելի մանրամասնօրէն մէջբերել անոր ուսումնասիրութեան կարեւոր եղբակացութիւնները, որ Գ. դարու Հայոց պատմութեան կը վերաբերին:

Մանանդեանի կարեւոր նկատողութիւններէն մէկն է թէ Արշակունի հարստութեան հիմնադիրը Տիրիթ Ա. չէ, ինչպէս սովորաբար կը համարուի: Ան եղած է պարզապէս առաջին Արշակունի հայ թագաւորը, որուն հետեւած են ուրիշներ, ինչպէս են Սանատրուկ (75-110), Աշխադար (110-113), Պարթամասիր (113), Վաղարշ Ա. (117-140), Բակուր (161-163), որոնք իրարու յաջորդած են ո՛չ թէ պայազատութեան սկզբունքով, այլ Պարթեւաց թագաւորին որոշողութեամբ եւ Հռոմի յայտնի կամ լուրջայն հաւանութեամբ:

37. Մանանդեան, ՔՅՈՒՄԱՆ տեսութիւն հայ մոլորի պատմութեան, Երեւան, 1957, հատ. Գ. էջ 127:





թեամբ, նման Օգոստոս կայսեր օրով սկըսած Հայաստանի վրայ իշխող օտարազդի թագաւորներուն, որոնք իրարու յաջորդած են կայսեր կարգադրութեամբ եւ Պարթեւաց թագաւորին կամայ կամ ակամայ հաւանութեամբ:

Բայց Վաղարշ Բ-ով (180/90 թուականներուն) Հայաստանի մէջ՝ կարելի է ըսել թէ սկիզբ կ'անէ Արշակունի հարըստութեան մը պայազատութիւնը. այդ օրէն Արշակունի թագաւորներ որդեւոր դի իրարու կը յաջորդեն մինչեւ 428: Վաղարշ Բ., որուն գոյութիւնը փաստուած է Մ. Խորենացիի վկայութիւններով<sup>38</sup>, Հայաստանի գահին կը տիրանայ Կոմմոդոս կայսեր (180-192) իշխանութեան խառնակ շրջանին, եւ կը յաջորդէ Սոյեմոս-Տիգրան օտարազդի թագաւորին, որ Հայաստանի թագաւոր եղած էր Հռոմայեցւոց իշխանութեամբ եւ անոնց ենթակայ էր: Վաղարշ Բ. տիրելով Հայոց գահին, իր եղբոր եւ անուանակից Վաղարշ Գ. Պարթեւաց թագաւորին օգնութեամբ, կը յաջողի դիւանագիտութեամբ պաշտպանել իր անկախութիւնը Հռոմի հանդէպ:

Վաղարշ Բ. յաջորդած է որդին Խոսրով, երբ հայրը կողմնակապ անգլիկոս զէմ պատերազմի ընթացքին կը մեռնի (198 թուականներուն): Խոսրով յաջորդելով հօրը, կը շարունակէ պատերազմը՝ անոր մահուան վրէժը լուծելու համար եւ կը յաջողի յաղթանակով ետ մղել բարբարոսները:

Խոսրովի թագաւորութեան շրջանը կը դուրսդիպի Գ. դարու սկիզբներուն. ան ժամանակակից եղած է Պարթեւաց Վաղարշ Գ. եւ Ե. թագաւորներուն, եւ հուսկ անոնց վերջին թագաւորին՝ Արտաւան Ե. (215-224): Խոսրովի մահուան թուականը յայտնի է. վասնզի իրեն կը վերաբերի Դիոն Կասսիոսի պատմածը՝ թէ 216ին,

Կարակալա Արեւելք եկաւ, նախ Ոսրոյնի (Նեքեսիոյ) Արդար թագաւորը խաբէութեամբ բանտելէ վերջ՝ նոյն կերպը բանտեցուց Հայոց թագաւորին հետ, զոր բարեկամական նամակներով իր մօտ կանչելէն վերջ՝ բանտարկեց մօրը հետ միասին եւ դրաւեց անոր կալուածները: Բայց երբ հռոմայեցիք ուղեցին Հայաստանն ալ դըրաւել, Հայերը զէնքի դիմեցին եւ յաղթական պատերազմով հռոմայեցի բանակը ետ մղեցին: Խոսրով տարի մը վերջ բանտին մէջ մեռաւ (Մննդ. էջ 60): Իսկ երբ Կարակալա 217ին սպաննուեցաւ իր զինուորներէն, անոր յաջորդեց Մակրինոս, որ պարթեւներէն կրած պարտութեան պատճառով՝ Արտաւանի հետ խաղաղութեան դաշինք կնքեց եւ Հայաստանի զէմ թշնամութիւնները դադարեցուց, ու թագը զրկեց Տրդատի, որ կը յաջորդէր հօրը՝ Խոսրովի. վերադարձուց նաեւ մայրը, դրաւած աւարը եւ Կապադովկիոյ մէջ հօրը ունեցած կալուածները, ինչպէս կը պատմէ նոյն հռոմայեցի պատմիչը՝ Դիոն Կասսիոս: Այսու Տրդատ Բ. թագաւորութեան համար ստոյգ թուական մը ունինք, այն է 217 տարին, ընդունուած բոլոր պատմագէտներէն (Մննդ. էջ 61-62):

Բայց մինչեւ ե՞րբ կ'երկարաձգի Տրդատ Բ. թագաւորութիւնը: Այս հարցին լուծումը կախում ունի Արտաւանի պատմական վկայութեան տրուած արժէքէն: Անոնք որ կ'ուզեն Խոսրով թագաւորի ժամանակակցութիւնը Արտաւանի հետ պահպանել<sup>39</sup>, համաձայն հայկական աղբիւրներու վկայութեան, Տրդատ Բ. թագաւորութիւնը կը հասցնեն մինչեւ 222, որմէ վերջ կը դնեն Խոսրով Քաջը՝ մինչեւ 251ի ատենները. այսինքն մինչեւ այն թուականը, երբ Շապուհ հռոմայեցիներու յաղթելով՝ կըցաւ Հայաստան մտնել եւ անոր թագաւորը անկէ հռոմացի, ինչ-

պէս վը վկայէ Զոնարաս պատմիչը: Սակայն Զոնարասի վկայութեան մէջ Հայաստանէն փախչող թագաւորը Տրդատ կը կոչուի. «Նորից սրա (Գաղղոսի) ժամանակ սկսուեցին պարսիկներ իսլամութենէն եւ նրանք նուաճեցին Հայաստանը. այս երկրի Տրդատ թագաւորը փախաւ, իսկ նրա որդիները մեկնեցին պարսից կողմերը» (Մննդ. էջ 84-85): Մանանդեան, ինչպէս նաեւ Հ. Ալիքեան կ'ընդունին թէ Զոնարասի այս վկայութեան մէջ յիշուած Տրդատն ըլլայ Տրդատ Բ. որ 217ին թագաւորաւ Մակրինոս կայսրէն: Հետեւեալ Տրդատ Բ. թագաւորութեան ժամանակաշրջանը եղած է 217-252/3:

Շապուհ Հայաստան մտնելէ եւ Հայաստանի թագաւորը հռոմացիէ վերջ, հոն թագաւոր կը կարգէ Արտաւազդ անունով մէկը, այսու ուղելով կերարկել իր վերելիս իրաւունքը Հայաստանի վրայ, ինչպէս կ'ընէին Հռոմայեցիք՝ երբ իրենք ըլլային յաղթողները: Արտաւազդ թագաւորի մը գոյութեան անտեղեակ են մեր պատմիչները. բայց անոր Հայաստանի թագաւոր եւ Շապուհի դաշնակից եւ բարեկամ ըլլալուն՝ կը վկայէ Տրիքելլիոս հռոմայեցի պատմիչը, մէջ բերելով Արտաւազդի նամակը ուղղուած Շապուհին՝ երբ այս վերջինս գերի բռնած էր Հռոմայեցւոց Վաղերիանոս կայսրը (Մննդ. էջ 93-94):

Շապուհի մահով (272) Հայաստանի քաղաքական վիճակն ալ կը փոխուի: Արդէն Հռոմի կայսրն ալ, Աւրելիանոս (270-275), Արեւելքի մէջ իր գերիշխանութիւնը կըցաւ վերահաստատել Զենոբիայի յաղթելէ վերջ: Եւ ինչպէս Աւրելիանոսի ժառանգած տիրողոսներէն կ'երեւի, Հայկական տիրոջ կըցաւ ստանալ Հայաստանն ալ իր գերիշխանութեան տակ առնելով: Ասով Հայաստանի գահին վրայ կըցաւ Արշակունի ընտանիքի օրինաւոր

ժառանգ մը նստիլ: Մանանդեան, ինչպէս նաեւ Հ. Ալիքեան, Մ. Խորենացիի վկայութեան վրայ հիմնուած<sup>40</sup>, կը համարին թէ այդ Արշակունի թագաւորը ըլլայ Խոսրով. ըստ Մանանդեանի՝ Խոսրով Բ. ն է՝ հայրը Տրդատ Գ. ի. իսկ ըստ Հ. Ալիքեանի՝ Խոսրով Կոտակն է, հայր Տիգրանի:

Մ. Խորենացիի վկայութեան մէջ Խոսրով, ըստ պատմահօր՝ Կոտակը, թագաւոր եղած է Որմիդդի երկրորդ տարին եւ Կոստանդինոսի ութերորդ տարին: Բայց Խորենացիի այս ժամանակագրութիւնը յայտնի վերադով սխալ է, վասնզի Կոստանդինոսի (337-361) ժամանակակից Որմիդդ թագաւոր չկայ, այլ Շապուհ Բ. (310-379): Խոսրով Կոտակի թագաւորութիւնն ալ Կոստանդինոսի ութերորդ տարին հետ չի հաշուուիլ: Ուստի, եթէ Խորենացիի վկայութեան մէջ կայ պատմական վաւերական տուեալ՝ անիկա Որմիդդի հետ ժամանակակցութիւնը ըլլալու է. եւ որովհետեւ Խորենացին Որմիդդը կը համարի Շապուհ Ա. (241-272) յաջորդը, ուստի յիշեալ երկու հեղինակներն ալ համաձայն են ընդունելու որ Որմիդդ Ա. (272-273) երկրորդ տարին թագաւոր եղած ըլլայ՝ Հայաստանի գահին վրայ՝ Խոսրով Արշակունին: Մանանդեանի համար ասիկա Տրդատի հայրը Խոսրով Քաջն է, որուն թագաւորութիւնը տեւած է մինչեւ 287, որ է մինչեւ Դիոկղետիանոսի չորրորդ տարին, ինչպէս կը վկայէ Սեբէոսի վերագրուած պատմութիւնը. «Ի չորրորդում ամի Դիոկղետիանոսի կայսեր մեռանի Քաջն Խոսրով ի վատանուն Անակայ»:

Խոսրով Քաջի թագաւորութեան շրջանին (273-287) Հռոմի կայսրները ուղելով իրենց արեւելեան շահերը վերելի՝ Պարսից զէմ պատերազմի պատրաստութիւններ տեսան. բայց մէկը միւսէն վերջ սպաննուեցան, ինչպէս Աւրելիանոս (270-275)

38. Մ. Խորենացի, Պատմութիւն Հայոց, Բ, ԿԵ. էջ 2: Այս գլուխները քաղուած են Բարդեսանէ եւ Փրիմիլիանոսէ, թէեւ պատմահայրը իր անձնական ենթադրութիւններով տուած է

անձեռն մեկնութիւններ, եւ չէ կըցած Խոսրով Ա. ի անձը զանազանել Խոսրով Բ. էն:

39. Տես Աստուրեան, Քաղաքական վերաբերութիւններ, էջ 229 եւ 239:

40. Մ. Խորենացի, Պատմութիւն Հայոց, Գ, Ը: Խոսրով Կոտակի համար կ'ըսէ. «Յերկրորդ ամի Որմիդդի պարսից արքայի եւ յութեւորդ

ամի ինքնակալութեան Կոստանդեայ յօգնականութենէ նորին թագաւորեաց Խոսրով»:



եւ Պորոս (276-282)․ առանց կարենալ սկսելու պատերազմը։ Սակայն Կարոս (282-283) վերջապէս կրցաւ պատերազմը սկսիլ եւ յաղթական քալել մինչեւ Տիգրէս, զոր գրաւեց։ Բայց ինքն ալ Տիգրէսի ափերուն՝ կայծակնահար մեռաւ։ Իսկ իր որդին՝ Նոմերիանոս դարձի ճամբուն վերայ սպաննուեցաւ, եւ 284ին կայսրութեան ղեկը ձեռք առաւ Դիոկղետիանոս։

Խոսրով այս շրջանին դաշնակից էր Հռոմայեցւոց․ ուստի շատ հաւանական է որ մասնակցած ըլլայ Կարոսի արշաւանքին եւ ինքն ալ մտած Տիգրէսը գրաւելու։ Մանանդեանի ըսելով, ուստի պատմադէտ Աննինսկին իրաւամբ կը համարի թէ Ագաթանգեղոսի մէջ Խոսրովի համար ըսուածը՝ թէ մինչեւ Տիգրէս հասած ըլլայ, կը վերաբերի այս Խոսրով թագաւորին, եւ ոչ թէ Արտաշի ժամանակակից Խոսրովի, ինչպէս Ագաթանգեղոս կը համարի (Մննդ․ էջ 100 եւ 102)։

Խոսրով Քաջի մահուան պարագաներն ալ մեղի յայտնի չեն։ Ագաթանգեղոսի աւանդութեան համաձայն՝ ան սպաննուած է Անակ պարթեւին։ Նոյնը Սեբէոսի վերագրուած պատմութիւնը կը կրկնէ, ճշգրտելով սպաննութեան թուականը․ «Ի չորրորդ ամի Դիոկղետիանոսի մեռանի Քաջն Խոսրով ի վատանուն Անակայ»<sup>41</sup>։ Ո՞վ էր Անակ եւ ի՞նչ շարժառիթէ մղուած կատարած է իր այս տխուր արարքը, կարելի չէ տուել։ Ագաթանգեղոսի աւանդածները աւելի վիպական գոյն ունին՝ քան պատմական։ Սակայն եղելութեան պատմականութեան արձագանք կը հանդիսանայ Եղիշի տուած բացատրութիւնը, որ Տրդատի մասին խօսած ատեն՝ կ'ըսէ թէ ան փախած ըլլայ Հայաստանէն փրկուելով «Ի հայրասպան մարդախողիսող հօրեղբարցն իւրոց»<sup>42</sup>։ Ասիկա կը նշանակէ թէ Հայաստանի թագաւորական ընտանիքին մէջ ալ տեղի կ'ունենային դահաւակաւորական կոռնքներ, ինչպէս նոյն շրջանին Պարսկաստանի մէջ կը պատահէին։

Տրդատ, հօրը սպաննութեան վրայ, ըստիպուած կը փախչի հռոմէական սահմանները․ մինչ Հայաստանի վիճակի մասին որեւէ պատմական տեղեկութիւն կը պակսի։ Միայն Եղիշի տուած բացատրութեան հիման վրայ կարելի է ենթադրել թէ այդ շրջանին Խոսրովի յաջորդած ըլլայ անոր եղբայրներէն մէկը։ Այս շրջանը տեւած է մինչեւ 298, չուրջ 11 տարի․ այսինքն մինչեւ այն ատեն՝ երբ Տրդատ վրցաւ հռոմէական զօրքերու օգնութեամբ դալ Հայաստան եւ գրաւել հայրենի դահլ (Մննդ․ էջ 104-105)։

Ահա այսու հասանք կարելոր հարցին․ որ է ճշտելու Տրդատի թագաւորութեան առաջին տարին, որմէ կախում ունի Հայոց քրիստոնէութեան դարձի թուականն ալ։ Արդ, Մանանդեան կը նախընտրէ Սեբէոսի վկայութիւնը, որուն համաձայն՝ Տրդատ թագաւոր եղած է Դիոկղետիանոսի 15րդ տարին․ որ է 298ին։ Վասնզի հետեւելով ուստի պատմադէտ Աննինսկի ըրած քննութիւններու եզրակացութեանը՝ կ'ըսէ․ «Սեբէոսի պատմութեան մէջ ճիշտ են ցոյց տրուած թէ՛ Խոսրով Բ․ի սպաննութեան եւ թէ՛ Տրդատ Գ․ի ու Կոստանդինոսի դահաւակութեան տարեթիւերը։ Եւ յիշուի Սեբէոսի ազաւարումներով լի եռանուն ցանկը, որ պարունակում է բազմաթիւ ժամանակագրական եւ ամենախիստ կական կոպիտ սխալներ, յատկապէս այս մասում տալիս է պատմական ճիշտ թուեր, որոնք կատարելապէս համապատասխանում են պատմագրութեան նոր ուսումնասիրութիւնների տուեալներին» (Մննդ․ էջ 102-103)։

Աստուրեան՝ Տրդատի թագաւորութեան սկիզբը կը դնէ 287ին, հետեւելով Մ․ Խորենացիի վկայութեան, եւ զայն համաձայն կը դնէ կայսերաց ճառախօսներու տուած տեղեկութեանց։ Ան կ'ենթադրէ որ «Կարոսի յաղթական արշաւանքին արդեւոր Դիոկղետիանոս կարգադրած ըլլայ՝ հռոմէական ընելով Հայաստանը եւ

Միջագետքը»<sup>43</sup>։ Իսկ այս կարգադրութիւնը հանդիպած ըլլայ 286 եւ 288ի ատենները․ վասնզի, կ'ըսէ, Կայսերաց տուած տեղեկութեանց համաձայն՝ այդ ատենները «Դիոկղետիանոս եւ Վուամ Բ․ի մէջ հողի խնդիրները կարգադրուեցան, եւ Տրդատ, որ մինչեւ այն ատեն Պարսից կողմանէ ղեկադրութիւն գտած էր, երկու կողմերէ եւս պաշտօնապէս ճանչցուեցաւ իբր օրինաւոր թագաւոր Հայոց»<sup>44</sup>։

Աստուրեանի այս ըսածները լոկ ենթադրութիւններ են, հիմնուած անոր վրայ՝ որ Խոսրով Քաջ սպաննուած ըլլայ 250ին եւ Տրդատ այդ թուականէն ի վեր Հռոմայեցւոց ապաւինած եւ անոնց ծառայութեան մէջ ըլլայ։ Ուստի Հռոմայեցւոց եւ Պարսից միջեւ կատարուած որեւէ կարգադրութիւն կը համարի որ վերաբերի Հայաստանի ալ։ Բայց հետեւելով Սեբէոսի վկայութեան եւ Մանանդեանի պատմական ուսումնասիրութեան, պէտք է ճշտել թէ Խոսրով Քաջ Հայոց թագաւոր եղած է 273-287ի շրջանին։ Ուստի այս միջոցին Հայաստան Պարսից զերիշխանութեան տակ չէր գտնուեր, այլ ունէր իր թագաւորը, բարեկամ Հռոմայեցւոց, մասնակցած Կարոսի յաղթական արշաւանքին, ու դեռ կենդանի՝ Դիոկղետիանոսի առաջին տարիներուն, եւ տէր Հայաստանի։ Հետեւաբար Դիոկղետիանոսի եւ Վուամի միջեւ եղած որեւէ կարգադրութիւն՝ այս ատենները՝ չէր կրնար վերաբերիլ Հայաստանի։ Իսկ երբ Խոսրով 287ին սպաննուեցաւ իր եղբայրներէն՝ որոնք հաւանաբար պարսկասէր կուսակցութեան յարած էին, եւ Տրդատ ըստիպուեցաւ Հայաստանէն փախչիլ, Դիոկղետիանոս չէր կրնար Հայաստանի ներքին գործերուն մէջ խառնուիլ եւ օգնել Տրդատի, մինչեւ որ պարագաները նպաստաւոր չդառնային։

Նպաստաւոր պայմանները չուլացան դաւու։ 293ին Պարսից դահլն վրայ բազմեցաւ Ներսէս, որ քիչ ատենէն ( 296 ) մտաւ Հայաստան, հաւանաբար կրթնած պարսկասէր կուսակցութեան ազդու գերքին վրայ։ Այսու Ներսէս կը խանդարէր Դիոկղետիանոսի եւ Վուամի միջեւ գոյացած լռեկայն վամ բացայայտ դաշինքը։ Ասիկա բաւական էր որ Դիոկղետիանոս այժմ միջամտէր։ Ան չուսով կանչեց իր Գաղերիոս Մաքսիմոս կեսարը, անոր յանձնեց լեզէոնները որ քալէ պարսից դէմ։ Պատերազմը տեղի ունեցաւ Միջագետքի մէջ, Խառնի եւ Նիկիւսիոսի (այժմեան Ռաքքան) միջեւ, Եփրատ գետէն անդին։ Պատերազմին մասնակից էր Լիկինիոս Լիկինիանոս զօրավարը, որուն մօտ ապաւինած էր եւ կրթնած Տրդատ, Հայաստանէն փախչելէն վերջ, Ագաթանգեղոսի համաձայն։ Գաղերիոս չարաչար պարտուեցաւ եւ ստիպուեցաւ նահանջել։ Անչույտ պատերազմին մասնակցած էր նաեւ Տրդատ, որուն կ'ականարկէ Ագաթանգեղոս՝ երբ կ'ըսէ Տրդատի համար․ «Ոչ սակաւ մղեալ պատերազմունս յայնկոյս Եփրատ գետոյ ի կողմանս Տաճկաց, ուր եւ կարեւոր խոցեալ ելանէր երկուրան ի պատերազմէն եւ զասպաղէնս նորին եւ զիւր գառնաղէն առեալ կապեալ ի թիկունս ի վերայ մկանանցն ի լիւղ անցանէր ընդ գետն Եփրատ»<sup>45</sup>։

Սակայն Դիոկղետիանոս չլքեց պատերազմը․ բանակ կազմեց ու զարմեալ Գաղերիոսի յանձնեց՝ որ իր պարտութիւնը քալէ։ Այս անգամ Գաղերիոս Հայաստան մտաւ, ուր Ներսէս հաստատած էր իր բանակը։ Գաղերիոս անձամբ, երկու ձիաւորներով մտաւ պարսկական բանակը՝ լրտեսելու համար, եւ յետոյ յանկարծական յարձակումով մը չարաչար պարտութեան մատնեց պարսիկները, գրաւեց բանակետը, զերի բռնեց Ներսէսի կանանոցը, մինչ թագաւորը փախաւ մինչեւ իր երկրին հեռաւոր սահմանները։ Այս մասն-

41. Սեբէոս, Պատմութիւն, Երեւան, 1939, էջ 15։

42. Եղիշ, վասն վարդապետի եւ Հայոց պատերազմին, Վենետիկ, 1893, էջ 133։

43. Աստուրեան, Քաղաքական վերաբերութիւններ, էջ 256։

44. Աստուրեան, Անդ, էջ 257։

45. Ագաթանգեղոս, Պատմութիւն, Վենետիկ, 1862, էջ 158։



բաժանումը թիվներով կը պատմեն հոռոմայեցի պատմիչները, 298 թ. երեւելի պատերազմը, ինչպէս կարելի է տեսնել Մանանդեանի պատմութեան մէջ, ուր թարգմանաբար մէջբերուած են Եւտրոպիոսի, Ռուբոսի եւ Աւրելիոս Վիկտորի վկայութիւնները (Մննդ. էջ 106-107):

Միեւնոյն պատերազմի նկարագրութիւնը իր մանրամասնութիւններով կը պատմէ նաեւ Փ. Բիւզանդ, իր Գ. դարութեան ԻԱ. դրոսին մէջ. միայն թէ թիւերի մասնակցութեամբ կը համարի որ պատերազմը տեղի ունեցած ըլլայ Արշակի հօր, Տիրանի ժամանակ: Ասկից՝ Ներսէս արքայի ժամանակացութիւնը Տիրանի հետ՝ Փաւստոսի մէջ չփոթութեան արդիւնք է եւ ոչ պատմական իրողութեան, ինչպէս նախնեթացաբար տեսանք:

Բնական է մտածել որ Տրդատ այս պատերազմին ալ մասնակցած ըլլայ հայկական զօրքերով. պատերազմի մը, որ իր երկրին մէջ տեղի կ'ունենար: Նմանապէս հաւանական է որ Գաղերիոսի հետ լրտեսելու գացող երկու ձիաւորներէն մէկն ըլլայ նոյնինքն Տրդատ եւ իր զօրավարը Արտաւազդ Մամիկոնեան: Ասով կը բացատրուի նաեւ այս պատերազմի նկարագրութեան պահուած ըլլալը Փաւստոսի մօտ, որ անշուշտ դա՛ն քաղած է ժողովրդական վէպէն, ինչպէս վերեւ ըսինք: Եւ Մէլիք Օհանջանեան նկատած է թէ վէպին մէջ Տրդատի անունը կրկնակ եղած է իբր Տիրան-Տրդատ: Մանանդեան ալ կ'աւելցնէ՝ թէ Գառնիի յունարէն արձանագրութեան մէջ յիշուած Հելիոս Տիրի-դատէս, թարգմանելու է Տիրան Տրդատ հայկական անունով, որ է մեր Տրդատ Գ. թագաւորին հետնորդական անունը (Մննդ. էջ 132): Նմանապէս Տիրանի՝ Արշակի հօր անունը կրկնակ եղած է, իբր Տիրան Տրդատ, որուն ծանօթ է նոյնպէս Եղիշէ, ինչպէս ունին անոր հնագոյն ձեռագիրներէն ոմանք<sup>46</sup>: Ուստի վարմանալի է որ Փաւստոս՝ երկու թագաւորներու

նոյն անունը կրելուն պատճառով՝ խառնած ըլլայ անոնց դործերը:

Դիտելեալիս, 297 թ. այս չքեղ յաղթանակէն վերջ՝ դաշինք մը կնքեց պարսից հետ, որ քառասուն տարի անխախտ մնաց եւ Հայաստան վայելեց այդ խաղաղութեան տարիները: Այս դաշինքին զօրութեամբ՝ հայկական չորս դաւառներ Ծովք, Անգեղ տուն, Աղծնիք եւ Կորդուք, ինչպէս նաեւ Միջագետքի Ծաւղէք եւ Ռէիմեան՝ հռոմէական դաւառներ եղան, եւ այդ թուականէն ի վեր ծանօթ են Անդրտիգրիսեան գաւառներ անունով: Թէեւ Հայաստան մասնակի կերպով կորսնցուց այս դաւառները, բայց փոխարէն ստացաւ Ատրպատականը մինչեւ Զինթա ամրոցը:

Բնական է որ այս յաղթանակէն վերջ, որուն Տրդատ անձամբ մասնակցած էր, դառնար իր հայրենի երկիրը եւ ժողովրդէր իր դահլ, եւ Դիտելեալիս այժմ կրնար Հայաստանի վրայ դնել իրեն բարեկամ եւ հպատակ հայ թագաւոր մը:

Հայկական աւանդութիւնն ալ գիտէ՝ թէ Տրդատ թագաւոր եղած է Դիտելեալիսի կայսեր օրով. այսպէս Ագաթանգեղոսի պատմութենէն կարելի է տարտամ կերպով կուսնել. մինչ Մ. Սորենացի աւելի եւս ճշտելով, իբր մանրախոյզ քննութեան արդիւնք՝ կը կարծէ որ ասիկա Դիտելեալիսի անունը Երրորդ տարին պատահած ըլլայ: Բայց յայտնի է որ ասիկա իր քննութեան արդիւնքն է եւ ո'չ թէ վաւերական աղբիւրի մը վկայութիւնը: Հուսկ Սերէոսի վերագրուած պատմութեան եւ ուսումն ցանկին մէջ մնացած վը տեսնուի աւելի հարազատ թուականը, որ կը հանդիպի Դիտելեալիսի 15րդ տարին, որ է 298 թ. ինչ որ կու գայ հաստատելու պատմագիտութեան ճշգրտութեանը:

Պարագայ մըն ալ կայ նկատելիք. 297 թ. նշանաւոր պատերազմը տեղի ունեցաւ Հայաստանի մէջ, որուն յիշատակը մնացած է Փաւստոսի Պատմութեան մէջ, որ

բազմիմ. (Հրո. Ե. Տէր Մինասեան), Երեւան, 1957:

պատերազմի վայրն ալ կը յիշէ, Բասեն գաւառի Ոսխայ գիւղին մօտ: Հռոմայեցիք յանկարծակիի բերելով՝ դրաւած են պարսից բանակը, ու շատ գերիներ բռնած, որոնց մէջ արքունի վանանոցը: Ներսէս որ հաղիւ կրցած է փախչիլ, պարտութենէն վերջ կ'առաջարկէ խաղաղութեան դաշինք, եւ ուղեւոր գերիները: Դաշինքը կը կնքուի 298 թ. Դիտելեալիսի կողմէն պատգամաւոր կ'ըլլայ բարձրաստիճան անձնաւորութիւն մը՝ Սիկորիոս Պորոս (Մննդ. էջ 110): Անշուշտ 298 թ. դաշինքի հետեւանքովն է որ Տրդատ կրցաւ իր հայրենի երկիրը վերադառնալ եւ Հայոց թագաւոր ըլլալ: Մանանդեան մէջբերելով Անիսիակիի՝ ուս պատմագէտին դիտողութիւնը, կ'ըսէ թէ Ուխտանէսի օգտագործած աղբիւրին մէջ յիշուած Պորոսը, որ Տրդատը թագաւոր կարգած է, Պորոս կայսրը չէ, այլ Դիտելեալիսի կողմէ Ներսէսի մօտ զրկուած պատգամաւորը, Սիկորիոս Պորոս: Ասով Ուխտանէսի վկայութիւնն ալ կ'ունենայ իր բացատրութիւնը եւ արժէքը՝ հաստատելու Մանանդեանի ճշտած թուականը:

Եզրակացնելով, կարելի է ըսել՝ թէ Մանանդեանի կարծիքը, որ կը ճշտէ Տրդատի թագաւորութեան սկզբնաւորութեան թուականը՝ նախընտրելի է նախորդ բոլոր կարծիքներէն: Վասնզի ոչ միայն հաստատուած է օտար պատմիչներու ընդարձակ վկայութիւններէն, այլ նաեւ հայկական աւանդութեան բոլոր վկայութիւններն ալ նկատի առնուած են եւ գտած իրենց ճիշտ բացատրութիւնը:

#### ՀԱՅԿԱԿԱՆ ԱՂԲԻՒՐՆԵՐԸ ՄԱՆԱՆԴԵԱՆԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՃՇՏՈՒՄՆԵՐՈՒ ԼՈՅՍԻՆ ՏԱԿ

Մանանդեանի այս պատմական ուսումնասիրութենէն կը հետեւի որ Արշակունեաց հարստութիւնը Հայաստանի մէջ կը սկսի Վաղարշ Բ. ու, 180-190 թ. աւանդները: որուն կը յաջորդէ որդին՝ Սորոսը Ա., մինչեւ 216: Ապա Տրդատ Բ. թագ կը ստանայ Մակրինոսէն 217 թ., ու կը թա-

գաւորէ մինչեւ 252: Այդ տարին Շապուհ Ա. պարսից արքան կը մտնէ Հայաստան, ուսկից կը փախչի Տրդատ, եւ շուրջ քսան տարի Շապուհի գերիշխանութեան տակ կը մնայ Հայաստան, ուր կը թագաւորէ Արտաւազդ անունով թագաւոր մը՝ բարեկամ Շապուհի: Շապուհի մահէն վերջ դարձեալ Արշակունի օրինաւոր ժողովրդը կը յաջորդի Հայաստանի դահին տիրանալ, այն է Սորոսը Քաջ, որդին Տրդատ Բ. ի (272-287): 287 թ. տեղի կ'ունենայ Սոսրոսի սպանութիւնը իր եղբայրներէն, եւ որոնցմէ մէկը կը դառնէ դահլ շուրջ 11 տարի: Հուսկ Տրդատ Գ., Սոսրոսի Քաջի որդին, Հռոմայեցոց օգնութեամբ վու գայ ժողովուրդը իր հայրենի դահլ 298 թ. ու կը թագաւորէ մինչեւ 332, շուրջ 34 տարի:

Ինչպէս կը տեսնուի՝ Արշակունի հարստութեան հիմնարկութենէն ի վեր երկու անգամ կը թագաւորեն Սոսրոսը եւ Տրդատ անունով թագաւորներ: Անշուշտ ասկից է որ առաջ եկած է չփոթութիւնը մեր պատմագիտներու մօտ, նոյնացնելով երկու Սոսրոսներ եւ երկու Տրդատներ միեւնոյն անձերու մէջ:

Արդ եթէ հիմա մեր պատմագիտներու տեղեկութիւնները քննենք այս լուսաբանութեան եւ լուծումի լոյսին տակ, անոնց մէջ կը դառնան շատ մը ճշմարիտ տեղեկութիւններ իրարու խառնուած:

1. - Ագաթանգեղոսի մօտ շատ յայտնի է երկու Տրդատներու իրարու հետ չփոթութիւնը: Ինչպէս Հ. Ակիսեան վեր հանած է, Ագաթանգեղոսի պատմութեան մէջ Տրդատի մասին պատմութեանը քաղուած են ժողովրդական վէպէն, որոնցմէ մաս մը կը պատշաճի Տրդատ Բ. ի, մինչ ուրիշ մաս մը Տրդատ Գ. ի, կան ալ որ երկու Տրդատներու կը պատշաճին: Այսպէս Ագաթանգեղոսի այն բացատրութիւնը թէ Տրդատ պատերազմած ըլլայ իր կեանքի բոլոր ընթացքին<sup>47</sup>, չի կրնար

47. Ագաթանգեղոս, Անգ, էջ 110: Տրդատի համար կ'ըսէ. «Իսկ դամեանայն տմա ժամանակաց իւրոյ թագաւորն Տրդատ գոռացեալ ընդ Պար-

46. Եղիշէ, վասն վարդապետի եւ Հայոց Պատմ-



պատշաճի Տրդատ Գ.ի, որ 298ի քառասունամեայ դաշինքի օրով թագաւոր եղած ըլլալով՝ երբեք առիթը չունեցաւ պարսիկներու դէմ կռուելու. բայց նոյն բացատրութիւնը լաւ կը պատշաճի Տրդատ Բ.ի (217-252), որ Արտաշիւր Սասանեանի ապստամբութեան շրջանին թագաւոր եղած ըլլալով՝ մասնակցած է Հռոմայեցիներու Պարսից դէմ մղած բոլոր պատերազմներուն (Տե՛ս Մենդ. էջ 77-85):

Իսկ այն պարագան որ Տրդատ Հայաստանէն փախած ըլլալ դէպի Հռոմայեցւոց կողմը՝ կրնայ պատշաճի երկու Տրդատներուն ալ, ինչպէս վերեւ տեսանք: Բայց Տրդատի դաստիարակուիլը Լիկիանոս իշխանի մօտ՝ վը վերաբերի Տրդատ Գ.ի: Վասնզի Եւտրոպիոսէն ծանօթ է որ Լիկիանոս Լիկիանոս, ընկեր Գաղերիոս Մաքսիմոսին, մասնակցած է 296ի եւ 297ի պարսկա-հռոմէական պատերազմներուն (Մենդ. 105): Ուստի Տրդատ Գ. որ 298ին թագաւոր եղաւ, մասնակցած էր անշուշտ իր զօրավարին՝ Լիկիանոսի հետ յիշեալ պատերազմներուն. եւ ինչպէս վերն ալ ըսինք, Աղաթանգեղոսի մէջ յիշուած դէպքը՝ թէ Տրդատ Եփրատէն անդին պատերազմի մը ընթացքին վերաւոր՝ լուղալով անցած ըլլալ գետը, յայտնի յիշատակն է 296ի պատերազմին<sup>48</sup>:

Գալով Գոթաց թագաւորի մը մենամարտի պատմութեան, որ թէ՛ Աղաթանգեղոս, թէ՛ Սեբէոս եւ թէ՛ Մ. Սորենացի կը յիշեն, դժուար է դայն վերադրել Տրդատ Բ.ի, ինչպէս կ'ընէ Հ. Ակինեան<sup>49</sup>, յիշելով Գորդիանոս վայսեր ժամանակ (238-240) տեղի ունեցած յարձակում մը ի Պանոնիա: Վասնզի դժուար է որ Տրդատ, Հայաստանի թագաւորը, մասնակցած ըլլայ իր սահմաններէն հեռու պատերազմի մը:

Կամ ըլլայ իր սահմաններէն հեռու պատերազմի մը. եւ յետոյ այդ թուականներուն Տրդատի տարիքը բաւական ալ առաջ դացած էր<sup>50</sup>, որով եւ մենամարտ մը իր զորքը չէր: Իսկ Տրդատ Գ.ի վերադրելու պարագային՝ չենք դռներ պատմական վրէպութիւն մը՝ ուր յիշուած ըլլալ որ 284 - 298ի տարիները Գոթերը Հռոմայեցւոց վրայ յարձակած ըլլան: Անշուշտ գոթական այս յարձակումը պէտք է փնտռել Փոքր Ասիոյ մէջ, որուն մասին յիշատակութիւն մը կայ Աթանազիոսի վարքին մէջ<sup>51</sup>: Ասիական հաւանաբար Գաղիենոս կայսեր ժամանակ (260-268) հանդիպած Գոթաց արշաւանքն է՝ Փոքր Ասիոյ վրայ, որուն առջեւը առաւ Ուենետոս, Պալմիրայի իշխանը, որ այդ ժամանակ տիրած էր Արաբիայէն մինչեւ Կապադովիա: Այս իշխանն է զոր Գաղիենոս ճանչցաւ իրր զուքս եւ «Խմպերատոր» եւ «Վերականգնող Արեւելի»<sup>52</sup>: Գուցէ այս իշխանին կատարած պատերազմը Գոթաց դէմ եւ կայսրէն ստացած տնտեսները վերադրուած ըլլան Տրդատի: Յամենայն դէպս, Տրդատի մենամարտը Գոթաց թագաւորին հետ պատմական ըլլալէ աւելի՝ վիպական բնոյթ ունի:

Աղաթանգեղոսի պատմութեան չափանիշներէն է Տրդատի հօր Սորոսի Գալիստուլեան դէպքը: Թէ սպաննողը եղած է Անուկ անունով պարթեւ իշխան մը, կամ Սորոսի եղբայրներէն մէկը, ինչպէս Եղիշէ Կակնարկէ<sup>53</sup>, հարցին էութիւնը չի փոխեր. դէպքը կրնայ ընդունուիլ իրր պատմական, թէեւ պարագաները համարուին իրր վիպական: Սակայն այս Սորոսին է որ երկար տարիներ կռուած է Պարսից դէմ եւ հասած է մինչեւ Տիգրոն,

ինչպէս կ'ընէ Աղաթանգեղոս<sup>54</sup>: Եւ կարելի է այդ պատմութիւնը վերադրել Սորոսի Ա.ի որ մեռած էր 216ին, նախ քան Արտաշիւրի ապստամբութիւնը. մինչդեռ Մանանդեանի վեր հանածը՝ այս Սորոսի Բ.ի ժամանակաշրջանին համար լաւ վը յարմարի: Վասնզի, ինչպէս տեսանք, Կարոս կայսրն էր (282-283), որ յաջողեցաւ չափերէ մտադրուած պարսից պատերազմը սկսիլ եւ յաղթական հասնիլ մինչեւ Տիգրոն: Սորոսի Բ. այս արշաւանքին մասնակցած պէտք է ըլլայ՝ քանի որ Կարոս Հայաստանէն մտաւ դէպի Պարսկաստան (Մենդ. էջ 101):

Հ. Ակինեան՝ Աղաթանգեղոսի մօտ Սորոսի մասին պատմութեանը կ'ուզէ վերադրել Տրդատ Բ.ի<sup>55</sup>. որովհետեւ ըստ Աղաթանգեղոսի, Արտաշիւր ապստամբութեան տուն՝ Հայաստանի թագաւորն էր Տրդատ Բ. (217-252): Բայց ասիկա չի բացատրեր թէ ինչպէս եղած է թիւրիմացութիւնը. Սորոսի անունը չէր կրնար չփոխուիլ Տրդատի հետ: Յետոյ Տրդատ Բ.ի ժամանակին ալ չի յարմարի մինչեւ Տիգրոն հասնիլը: Ուստի բոլորովին ուղիղ չէ Մանանդեանի սա բացատրութիւնն ալ թէ «Աղաթանգեղոսի Պատմութեան մէջ՝ Տրդատ Գ.ի հօր Սորոսի եւ վերադրուած այն բոլոր դէպքերը, որ իրապէս տեղի են ունեցել Տրդատ Բ.ի ժամանակ, որը Հայաստանումն թագաւորել է 216ից մինչեւ 252 թիւը» (Մենդ. էջ 76): Անշուշտ այն իմաստով հասկնալու է որ Աղաթանգեղոսի մօտ Սորոսի վերադրուած ժամանակաշրջանը կը համապատասխանէ պատմականորէն Տրդատ Բ.ի շրջանին: Եւ թէ Արտաշիւրի եւ Շապուհի դէմ եղած պատերազմներուն մասնակցած է՝ իրականին մէջ՝ Տրդատ Բ.: Բայց Սորոսի անունին կապուած շատ դէպքեր պատմական են Սորոսի Գալիստուլեան համար, ինչպէս անոր մինչեւ Տիգրոն հասնիլը եւ Անուկէն սպաննուիլը: Նմանապէս աւելի ուղիղ է ըսել թէ

Աղաթանգեղոսի մօտ Տրդատ Գ.ի վերադրուած են նաեւ ինչ որ կը վերաբերի Տրդատ Բ.ի, ինչպէս այն բացատրութիւնը թէ «Ջամենայն ամս ժամանակաց ինչոց թագաւորն Տրդատ դոռացեալ ընդ Պարսից տէրութեանն խնդրէր զքէն վրէժուց մարտիւք պատերազմաց»:

Սակայն Աղաթանգեղոսի մօտ Սորոսի Գալիստուլեան համար սխալմամբ ժամանակակից համարուած է Արտաշիւր, եւ ասիկա է հակասական կամ խառնակ ժամանակաշրջանին տեղի ունեցող պարագան: Իսկ այս թիւրիմացութիւնը կարելի է բացատրել անով որ Աղաթանգեղոս իր պատմութիւնը սկսած է Արեւելքի պատմութեան համար ամէնէն մեծ ձեռնարկներ կազմող դէպքով, այն է Արտաշիւր Սասանեանի ապստամբութեամբ ընդդէմ Արտաւան Ե.ի, եւ հետեւաբար՝ Արշակունեաց անկումով Պարսկաստանի մէջ: Բայց Աղաթանգեղոս դիտէ թէ Արտաւան Ե.ի ժամանակակից եղած է Սորոսի անուն հայ Արշակունի թագաւոր մը, ցեղակից Արտաւանի, եւ դուցէ «եղբայր», ազգական իմաստով: Ուստի, ինչպէս թիւրիմացութեամբ երկու Տրդատներ միացնելով կազմած է մէկ Տրդատ, այսպէս երկու Սորոսներու զորքերը միացնելով՝ կազմեր է մէկ Սորոս. ու Սորոսի Գալիստուլեան պատերազմները ընդդէմ Պարսից եւ անոր մինչեւ Տիգրոն հասնիլը համարած է թէ պատահած ըլլալ Արտաւանի ժամանակակից Սորոսի Ա.ի ձեռքով՝ ի վրէժ Արտաւանի սպաննութեան:

Այսպէս կը համարիմ թէ աւելի բնական ըլլալ թիւրիմացութեան պատճառներու բացատրութիւնը. եւ կարելի է ըսել թէ այսու՝ Աղաթանգեղոսի գրքին հակասութիւններն ալ վերածուած կ'ըլլան եւ կ'արդարանայ Տաշեանի տեսութիւնը՝ թէ Աղաթանգեղոսի գրքին մէջ «կան շատ մը ուղիղ տեղեկութիւններ, բայց միմեծ եւ իրարու խառնուած»<sup>56</sup>:

սից տէրութեանն խնդրեաց զքէնս վրէժուց մարտից պատերազմաց» նմանապէս քիչ վերջ. «Եւ էր մարտ սաստիկ խստութեան Տրդատայ ընդ պարսից թագաւորն զամենայն աւուրս կենաց իւրոց»:

48. Տե՛ս ծան. 45:

49. Հ. Ակինեան, Գրիգոր Լուսաւորիչ, Հանդէս Ամս. Եր. (1949), էջ 39:

50. Տրդատ Բ. 217ին թագ առաւ. եթէ ենթադրենք որ դռնէ 25ամեայ էր, 240ին՝ 55 տարեկան ըլլալու էր:

51. Վարք եւ վկայաբանութիւն սրբոց, Վենետիկ, 1874, Հատ. Ա. էջ 46:

52. Տե՛ս Մանանդեան, Անդ, էջ 94:

53. Տե՛ս ծան. 42:

54. Աղաթանգեղոս, Անդ, էջ 30:

55. Հ. Ակինեան, Անդ, էջ 29:

56. Տաշեան, Աղաթանգեղոս առ Գեորգիայ Ատրի եպիսկոպոսին, Վիեննա, 1891, էջ 92: (Աղգ. Մատ. Գ.):



2. — Անգամ մը որ Ազաթանգեղոսի պատմութիւնը հրապարակը բռնած էր եւ իր ստեղծած նոյնացումները ընդհանրացած էին, անշուշտ եթէ կային տարբեր աղբիւրներ որ զանազանէին երկու խոսքովներ կամ Տրդատներ՝ ասոնք պիտի մեկնուէին Ազաթանգեղոսի համեմատ: Ասիկա պատահած է Մ. Խորենացիի, որ յայտնի կերպով ձեռքի տակ ունի խոսքով Ա.ի պատմութիւնը, բայց զայն կը չփոթի խոսքով Քաջի հետ<sup>57</sup>:

Անոր հակառակէն, Սեբէոսի վերադրումը պատմութեան եռանուն ցանկը վաղմուծ է պատմական ստույգ աղբիւրէ մը՝ ուր խոսքով Բ.ի մասին պատմութեանը յարմարեցում են Ազաթանգեղոսի ստեղծած խոսքովին: Վասնզի Սեբէոսի եռանուն ցանկը խոսքովին մասին խօսելով կ'ըսէ. «Յամին երրորդի Ներսէսի կայսեր (Խմա Աւրելիանոսի) եւ յամա Լ. երրորդի առաջի Մեծի խոսքովայ արքային Հայոց փոփոխումն թագաւորութեանն այսորիկ լեալ: Եւ էր խոսքով ԼԱ. ամ, Ներսէսի երրորդն, Արտաշիւր զառաջինն»<sup>58</sup>: Յայտնի է որ ցանկը կազմող հեղինակը Արտաշիւր (224-240) ժամանակակից համարելով խոսքով Մեծի, զայն կը յարմարեցնէ այն խոսքովին՝ որ իր աղբիւրին մէջ ժամանակակից է Աւրելիանոսի (270-275): Բայց ահա Աւրելիանոս կայսրը թագաւորած է 270-275. Եւ հաւանաբար անոր երրորդ տարին ո՛չ թէ Արտաշիւր, այլ խոսքով եղած է թագաւոր: Նոյն թուականը կը ստուգուի նաեւ Մ. Խորենացիի վկայութեամբ ալ, որ զիտէ թէ խոսքով մը, ըստ պատմահօր խոսքով Կոտակ, թագաւորած է Որմզդի (272-273) երկրորդ տարին, որ է 273ին<sup>59</sup>: Ուստի Սեբէոսի մէջ յիշատակուած եռանուն ցանկն ալ խեղաթիւրուած է Ազաթանգեղոսի ստեղծած սխալին վերայէն. բայց մնացած է հետք ստույգ վաւերացրին, որուն համաձայն՝ խոսքով

Մեծ ժամանակակից է Աւրելիանոս կայսեր: Նոյն աղբիւրին մէջ ուրիշ հետք մըն ալ կայ խոսքով Բ.ի զոյգութեան, այն է Կարոս կայսեր ժամանակակիցութիւնը եւ անոր հետ բնեցած յարաբերութիւնը, անշուշտ Տիգրանի վրայ ըրած արշաւանքի առիթով: Սակայն հոն բոլորովին սխալ տեղեկութիւն մը կը տրուի՝ իբր թէ խոսքով Միջագետքի մէջ պատերազմած ըլլայ Կարոսի դէմ. «Յամին ԽԼ. երրորդի խոսքովայ ԺԼ. Արտաշիւր մինչ արքայ ի Միջագետս էր Կարոս կայսր դռմարէ ամբոխ զաւրաց բազմաց եւ զիմէ ի վերայ արքային խոսքովայ: Անտի աճապարեալ ընդդէմ նորա ելանէ Կոռնակ սպարապետ Մեծին խոսքովու հաւրն Տրդատայ»: Ասիկա թիւրիմացութիւն է, առաջ եկած Կայսերաց զբքին սա բացատրութեանն թէ «Կարոս վախճանեցաւ ի Միջագետս եւ Կարինոս սպանաւ ի պատերազմին Կոռնակայ»<sup>60</sup>: Բայց միւս վողմէ կ'երեւի վաւերական աղբիւրի մը զոյգութիւնը՝ ուր խոսքով ժամանակակից համարուած է Կարոսի եւ անոր հետ յարաբերութիւն ունեցած:

3. — Նոյնպէս Ուխտանէսի մօտ պահուած աւանդութեան մը համաձայն՝ Տրդատ թագաւոր եղած ըլլալու է Պրորոս կայսեր ատեն. այս հիման վրայ, ինչպէս տեսանք, հանգուցեալ Ս. Քասուրի ճշտած է Տրդատի թագաւորութեան սկիզբի տարին, զայն գնելով 278ին: Բայց Մանգեանի ուսումնասիրութեան մէջ այս կէտն ալ լուսաբանուած է. վասնզի ստույգ է որ Պրորոս կը կոչուէր Տրդատը թագաւորեցնողը, բայց ոչ թէ Պրորոս կայսր, այլ Դիոկղետիանոս կայսեր պատգամաւորը՝ Սիկորիոս Պրորոս, որ Ներսէսի հետ 298ի դաշինքը կնքած է<sup>61</sup>: Հետեւաբար, Ուխտանէսի վկայութիւնը շատ յարգել կը դառնայ եւ կը հաստատէ Մանանդեանի եզրակացութիւնը՝ Տրդատի թագաւորութեան

թեան սկիզբի թուականին համար. որովհետեւ կը տեսնուի որ Ուխտանէս դտած է վաւերական աղբիւր մը, ուր Տրդատի թագաւորութեան եղելութիւնը վաղուած էր Պրորոս անունին հետ: Նման չփոթում թիւն մը միակը չէ մեր պատմագիրներուն մօտ: Մ. Խորենացի ալ ժողովրդական վէպէն քաղելով կը յիշէ Դոմետիանոսի մը Հայաստան գալը<sup>62</sup>, զոր ինք Դոմետիանոս կայսեր կը վերադրէ. մինչ իրականին մէջ՝ հանրածանօթ Կորբուզոն զօրավարն է, որուն երկրորդ անունը Դոմետիանոս էր: Ուստի զարմանալի չէ որ Ուխտանէս ալ նոյն սխալը գործած ըլլայ՝ նկատմամբ Պրորոս անունին:

4. — Հուսի, Փաւստոսի մօտ ալ տեսանք պատմական վկայութիւն մը, որ կը վերաբերի 298ի պատերազմին. բայց Բիւզանդ թիւրիմացութեամբ զայն զետեղած է Տիրանի ժամանակ, պահելով Ներսէսի անունը: Տեսանք որ այս թիւրիմացութեան վրայ հիմնուած՝ Հ. Ակինեան Գ. Կարոս հայ թագաւորներու եւ կաթողիկոսներու թուականները փոխած է: Ակինեան ինքն իր թիւրիմացութեան պատճառներուն վրայ: Հիմա ամփոփելով ըստաւանքը՝ կը կրկնէ թէ Փաւստոսի Գ. զարդութեան ԻԱ. զուգին մէջ Ներսէս արքային դէմ պատերազմի նկարագրութիւնը ո՛չ թէ Տիրանի ժամանակ պատահած պատերազմի մը նկարագրութիւնն է, այլ 297ի Գաղերիոսի պատերազմն է ընդդէմ Ներսէսի, որուն մասնակցած է Տրդատ: Պատերազմը տեղի ունեցած է Հայաստանի մէջ եւ յաղթութեան հետեւանքով՝ Տրդատ թագաւոր կարգուած է Հայաստանի: Նման դէպք մը չէր կրնար անտեսուիլ հայ բանաստեղծներէ, որոնք յաւերժացուցած են զայն իրենց երգերուն մէջ: Փաւստոս անկէ քաղած է պատերազմի նկարագրութիւնը, բայց սխալմամբ կարծած է որ զէպքը պատահած ըլլայ

Տիրանի ժամանակ, թէեւ Ներսէսի անունը պահած է: Թիւրիմացութեան պատճառն ալ ճիշտ նոյն է՝ ինչ որ ըսինք միւս պատմիչներու համար. այսինքն՝ անուններու նմանութեանն ծագած է անձերու նոյնացումը: Արդ, Մելիք Օհանջանեան իր «Տիրան Տրդատի վէպը ըստ Փաւստոս Բիւզանդի»<sup>63</sup> ուսումնասիրութեան մէջ ներկատել տուած է թէ «Տիրան թագաւորը հայկական սովորութեան համեմատ՝ իր պապի Տրդատ Գ.ի անունով կոչուած է Տրդատ, եւ անունուած Տիրան Տրդատ»: Մելիք Օհանջանեանի նկատողութիւնը այժմ փաստուած է Ներսէսի հնագիտական ամփոփումով 1174էն, յիշելով Արշակի հօր անունը՝ Վրսէ. «Յամացն Արշակայ արքայի որդւոյն Տիրանայ Տրդատայ»: Ուրիշ խումբ մը ձեռագիրներ ունին «Տիրանայ թոռորդւոյն Տրդատայ» յայտնի մեկնողական յաւելումը: Երբոր խումբ մըն ալ պարզապէս «Տրդատայ» ընթերցումը ունին<sup>64</sup>: Ուստի Տիրան Տրդատ կրկնակ անունին զոյգութիւնը բաւական լաւ փաստուած է: Միւս կողմէ, Մանանդեան ալ կը յայտնէ իր կարծիքը՝ թէ Տրդատ Գ.ի անունն ալ կրկնակ եղած պէտք է ըլլայ՝ իբր Տիրան Տրդատ. եւ իր այս ենթադրութեան համաձայն՝ Գառնիի յունարէն արձանագրութեան մէջ յիշուած Տրդատի անունին կից Հելիոս յունարէն անունը կը համարի «պարզապէս Տիրան անունն թարգմանութիւնը». վասնզի, կ'ըսէ ան. «Յայտնի է արդէն, որ Հայերի Տիր աստուածը համապատասխանում էր Ապոլլոնի եւ Հելիոսի. ուստի շատ լաւ հասկնալի է թէ ինչու Տիրան Տրդատ Գ.ը յունարէն արձանագրութեան մէջ անունուած է Հելիոս Տիրիդատէս» (Մանդ. էջ 132-133):

Հետեւաբար այս պարագաները աչքի առջեւ ունենալով՝ զարմանալի չէ որ Փա-

57. Տես ծան. 38:

58. Սեբէոս, Անդ, էջ 14:

59. Տես ծան. 40:

60. Անանու ժամանակագրութիւն, (հրտ. Հ. Բ. Սարգիսեան), Վենետիկ, 1904, էջ 28:

61. Մանանդեան, Անդ, էջ 114:

62. Մ. Խորենացի, Պատմութիւն Հայոց, Բ, ԾԳ:

63. Տես Տեղեկագիր Հայկական ՍՍՌ Գիտութիւնների Ակադեմիայի, 1947, թիւ 6 եւ 7: Այս ուսումնասիրութիւնը տեսած չենք. մէջբերում

մը կատարեցինք Մանանդեանի Պատմութեանն, Բ. 132:

64. Տես ծան. 46:



լրատու ժողովրդական վեպը օգտագործելու իր պատմություն մեջ, չփոխած ըլլայ եւ երկու նոյնանուն թագաւորներու գործերը իրարու խառնած:

Մէջ կը բերենք Փաւստոսի այն հատուածը՝ ուր Ներսէսի դէմ 297ի պատերազմի նկարագրութիւնը կայ, որ ինքնուրոյն եւ անջատ ըլլալու բնոյթը ունի ամբողջ գլուխին մէջ. միջանկեալ Անդովիկ եւ Արշաւիր զօրավարներու անունները մտած են լոկ իբր բացատրութիւն, եւ յայտնի կ'ենան միջարկութիւն ըլլալը: Այնպէս որ դուրս ձգելով այդ անուններու ամբողջ հատուածը կը մնայ իբր լոկ նկարագրութիւն 297ի պատերազմին այն մանրամասնութիւններով՝ որ օտար պատմիչներ կուտան նոյն պատերազմի մասին: Այսպէս, թէ պատերազմը տեղի ունեցած է Հայաստանի մէջ, Հռոմայեցի զօրավարը Գաղերիոս՝ երկու ձիաւորներով լրտեսած է պարսից բանակը, յանկարծական յարձակումով զրաւած է անոնց բանակետը, զերի բռնած է արքունի կանանոցը եւ անբաւ զերիներ եւ աւար, Ներսէս փախած է մինչեւ իր երկրին հեռաւոր սահմանները:

Ահա Եւտրոպիոսի հատուածը (Թ, 24 - 25: Տես Մենդ. էջ 106).

«Բայց շուտով նա (Գալերիոսը) Իլլիրիկումի ու Միդիայի օժանդակութեամբ զօրք հաւաքեց եւ նորից Մեծ Հայքում կուռի բռնուեց Հորմիդէի եւ Շապուհի պապ՝ Ներսէսի հետ ամենամեծ հնարամտութեամբ եւ ոչ պակաս խորհրդածութեամբ ու նաեւ քաջութեամբ. նա մինչեւ իսկ կատարեց լրտեսի դեր՝ երկու կամ երեք ձիաւորի հետ միասին, պարտութեան մատնելով Ներսէսին՝ նա կողոպտեց նրա բանակետը, վերցրեց նրա կանանց, քոյրերին, երեսաներին, եւ բացի այդ, անթիւ քանակութեամբ պարսիկ անուամականներ, հարստաւորն զանձեր: Իրեն (Ներսէսին) նա քչեց Պարսից թագաւորութեան ամենահեռաւոր ամայի տեղերը»:

Նման ձևով նաեւ Ռուփոս Փետտոս (զլ. ԻԵ: Տես Մենդ. էջ 107).

« Ինքը հրամանատարը (Գալերիոս) երկու ձիաւորի հետ լրտեսեց Մեծ Հայքում թշնամուն եւ ապա քանհինգ հազար զօրքով անսպասելիօրէն յարձակուելով թըշնամական բանակատեղերի վրայ՝ նա իսկոյն Պարսից անթիւ զօրքերի վրայ ինկաւ եւ նրանց կատարեալ ջարդ տուեց: Պարսկաստանի թագաւորը, Ներսէս, փախաւ. նրա կիներ եւ աղջիկները գերի ինկան, բայց մեծագոյն հսկողութեամբ նրանց ողջախոհութիւնը պահպանեցին»:

Այժմ մէջբերենք նաեւ Փաւստոսի նկարագրութիւնը, որպէսզի ակնհայտ տեսնուին թէ՛ նմանութիւնները վերի վկայութիւններուն հետ եւ թէ՛ անոր ժողովրդական բանահիւսութեան հետ ունեցած ազդեցութիւնը:

Ի կողմանց արեւելից խաղաց դնաց ինքն Ներսէս արքայն Պարսից զալ առնուլ այրել եւ աւերել, կորուսանել եւ միահաղոյն իսկ յիւր պատրիկ զսահմանս Հայաստան երկրին:

Եւ առեալ զամենայն զօրս իւր բնիւ աղեւ ամենայն մեծաւ կարաւանաւ, [իսկ, փղակոյտն բազմութեամբ հանդերձ, անթիւ վաճառօք եւ բնիւն մաշկապաճենօք եւ ամենայն կանանօքն եւ հանդերձ Տիկնանց Տիկնան,

եկն եհաս ի սահմանս Հայոց, խճողեաց ելից զերկիրն առ հասարակ:...

Ապա իբրեւ զայս ամենայն լսէր թագաւորն Յունաց, նոյնօրինակ եւ նա զիւր զօրսն զուժարէր եւ չու արարեալ զայր հասանէր յերկիրն ընդդէմ թագաւորին Պարսից: [Հայոց եւ եթող զիւր զբանակն զՍտատալ քաղաքաւն.

եւ ինքն ընտրեաց իւր արս երկուս զլիսաւորս, արս իմաստունս հայաստան բանակէն (Այսինքն զԱրշաւիրն եւ զԱնդովիկն) եւ այսպէս նոքօք հանդերձ ինքն իսկ կայսրն

ի շինականութեան կերպարանս

ի կաղամբավաճառի օրինի մտանէր ի բանակն Պարսից: Իրբեւ էր նա բանակեալ ի գաւառին Բասենոյ

ի զիւղն որ անուանեալ կոչի Ոսխայ, եկին մտին ի բանակն արքային Պարսից, զիտեցին քնեցին զչափ առին զնոցա զօրութիւն զօրացն: Եւ անտի գարձան յիւրեանց բանակն կաղմեցան պատրաստեցան, զային հասնէին

զտանէին զբանակն արքային Պարսից, ի նմին տեղուջ բանակեալ ի պղերզութեան յանհոգութեան յանկասկած խաղաղութեան: Ապա հասեալ ի տուննէն ժամուն անկանէին ի վերայ թագաւորին Պարսից ընդ սուր զամենայն բանակն հանէին եւ ոչ գմի ոչ ապրեցուցանէին: Եւ առին զկապուտ զաւար բանակին եւ զկանայս թագաւորին եւ զբամբիշն եւ զբանական ընդ նոսին եւ զինչս եւ զատուցուածս նոցին. ընդ նմին ի գերութիւն վարէին զկանայս նոցա եւ զգանձս եւ կահս եւ զկաղմած նոցա:

Բայց միայն թագաւորն պրծեալ մաղապուր պէշասպիկ մի սուրհանդակ առաջի պրծեալ ելանէր փախստական հազիւ ուրեմն կարէր անկանել հասանել յաշխարհ իւր: (Փ. Բիւլ. Գ, ԻԱ):

Յայտնի է ուրեմն որ Փաւստոս այս ամբողջ հատուածը՝ ժողովրդական երգերէն քաղելով՝ խառնած է Տիրանի ժամանակ տեղի ունեցած եւ նման պարագաներու տակ կատարուած պատերազմին պատմութեան: Եւ զարմանալի չէ որ մեր պատմագիրն ալ, նման մեր միւս պատմագիրներուն, չփոխած եւ խառնած ըլլայ տարբեր զէպքեր ու ժամանակներ՝ տարուած անուններու նմանութենէն, քանի որ իր, ինչպէս նաեւ մեր միւս պատմիչներուն,

կարեւոր աղբիւր եղած են ժողովրդական երգերը, ուր չկայ ժամանակագրութիւն, եւ անուններն են որ վառաջնորդեն պատմիչը գտնելու ժամանակները եւ զէպքերը:

#### ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ

Տեսանք ամէնէն առաջ թէ ի՞նչպէս մեր պատմիչներու տուած զանազան եւ տարբեր տեղեկութիւնները միեւնոյն զէպքի մասին՝ առաջնորդուած են ներկայ բանասէրները զանազան կարծիքներու, նկատմամբ Տրդատի թագաւորութեան թուականին: Եւ անոնցմէ իւրաքանչիւրը հիմնուած է առաւելագոյն այս կամ այն վկայութեան վրայ, հաստատելու համար իր կարծիքը: Մինչ Մանանդեան, յետ լուսաբանելու Գ. դարու պատմութիւնը՝ օտար պատմիչներու վկայութիւններով, նկատի առած է նաեւ հայ աւանդութեան բոլոր վկայութիւնները եւ զանոնք լուսարանած ու բացատրած. այնպէս որ այդ բացատրութիւններով՝ թէ՛ անոնց տարբերութիւնները կամ հակասութիւնները վերցրւած են եւ թէ՛ իր պաշտպանած կարծիքը հաստատուած:

1. — Այսպէս, Ագաթանգեղոսի հակասական ժամանակագրութիւնը, որուն զըլխաւոր պատճառը խորով Բ.ի սխալ ժամանակակցութիւնն է Արտաշրի հետ, ու Տրդատ Բ.ի եւ Տրդատ Գ.ի նոյնացումը, կը վերանայ եւ հոն Բերեան կ'ելլեն պատմական ստույգ յիշատակութիւններ ըլլալ խորովի մինչեւ Տիգրան արշաւանքի մասին, ըլլալ Տրդատ Գ.ի պատերազմին՝ Եփրատ գետէն անդին, 296ին, ըլլալ Տրդատ Բ.ի անընդհատ կռիւներու մասին ընդդէմ Պարսից:

2. — Ագաթանգեղոսի սխալը առաջնորդած է Մ. խորեանցին անտեսելու իր աղբիւրին մէջ խորով Ա.ի եւ խորով Բ.ի զանազանութիւնը, ինչպէս նաեւ խորով Բ.ի ի նպատակ ժամանակագրական տեղեկութիւնը վերադրած է խորով Գ.ի՝ ըստ տեղեկութիւն անտեղի ժամանակագրութիւն:



3. - Նմանապէս Սերէոսի վերադրուած Պատմութեան եռանուն ցանկին մէջ երկու խոսքովներ մէկի վերածուած են. բայց խոսքով Բ. ի նպատակ պատմական որոշ վկայութիւններ մնացած են՝ յայտարարող անոր թագաւորութեան շրջանը, այն է ժամանակակցութիւնը Աւրելիանոս եւ Կարոս կայսրներուն. ինչպէս նաեւ հարազատ պահուած է անոր սպանութեան թրականը եւ Տրդատի, իր որդւոյն, թագաւորութեան թուականը:

4. - Ուխտանէսի մօտ պահուած բոլորովին տարբեր տեղեկութիւնը, որ Տրդատի թագաւորութիւնը կը կապէ Պրորոսի հետ, կը գտնէ իր բացատրութիւնը եւ կը հաստատէ Տրդատի թագաւորութեան ճշտուած թուականը: Պրորոս՝ ո՛չ թէ կայսրն է, այլ Դիոկղետիանոսի պատ-

գամաւորը, որ 298 թ. զաշինքը կնքեց Ներսէսի հետ եւ անշուշտ Տրդատը թագաւորեցուց:

5. - Հուսկ Փաւստոսի մէջ ալ 297 թ. պատերազմին նկարագրութիւնը պահուած է, թէեւ Տիրանի ժամանակին յարմարեցւած, բայց թիւրիմացութեան պատճառներուն բացատրութենէն վերջ՝ ան ալ կու գայ լրիւ հաստատելու ինչ որ Մանանդեան ճշտած էր Տրդատի մասին, թէ ան մասնակցած էր 297 թ. պատերազմին, եւ այդ յաղթանակէն վերջ թագաւոր ստակուած: Այդ իսկ պատճառով 297 թ. պատերազմի յիշատակը յաւերժացած է ժողովրդական բանաստեղծութեան մէջ:

Ուստի Մանանդեանի կարծիքը ունի բոլոր պայմանները ընդունելի ըլլալու:

(Շարունակելի)

Հ. ՊՕՂՈՍ ԱՆԱՆԵԱՆ

## ՊԱՏԱՍԽԱՆ

ԱՌ « ԱՆԴԱՍՏԱՆ »

Անդաստան իր ճիշտ թիւով հրատարակած էր իր քրիկ ուսումնասիրութիւն մը Աւետարանին արամեայ բառերը խորագրով (1955, էջ 124-125):

Բազմալեզու մէջ (1958, էջ 32-33), Պր. Ա. Սալմաստան, հակիրճ յօդուածով մը կը մատնանշէր որ վերոյիշեալ գրութիւնը բանագործութիւն մըն էր, աւելի ճիշտ՝ գրեթէ բառացի թարգմանութիւն էր գրախօսականի մը որ լոյս տեսած էր Bulletin de la Soc. Linguistique de Paris-ի մէջ (1954, t. 50, fasc 2, 186). գրախօսողն է J. Cantineau. Իսկ գրախօսեալ ուսումնասիրութեան բուն հեղինակն է Harris Birkeland. Հարազատ խորագիրն է «The Language of Jesus» (Oslo, 1954): Գրախօսականէն օրինակ մը խմբագրութիւնն ալ ունի:

Անդաստանի պատ. Խմբագրութիւնը իր 8-9 թիւերով (1958, էջ 239-240) բողոքի նամակ մը կ'ուղղէ մեր խմբագրութեան. կը մեղադրէ մեզ, որ Պր. Ա. Սալմաստանի յօդուածը հրատարակելէ առաջ՝ Անդաստանի խմբագրութեան կարծիքը չենք հարցուցած. ապա կը պանծացնէ ու կը ծանօթացնէ մեզի Հ. Պ. ի բարձր արժանիքները. կը խճրէ Պր. Ա. Սալմաստանը. կը յանգի մեկնարանելու իր թերթին քրոնիկներուն արժէքը. եւ հուսկ կ'եզրակացնէ.

«Խնդրոյ առարկայ քրոնիկին գալով՝ ստորագրուած էր մեր աշխատակիցին կողմէ, որովհետեւ պարզ արձագանք մըն էր Հարբիս Պր. Ա. Սալմաստանի մասին: Թերթըրուած Հարբիս Պր. Ա. Սալմաստանի անունն յիշատակութենէն, որ քանիցս կրկնուած է քրոնիկին մէջ, եւ վարկ տալու համար մասնագիտական նիւթին՝ խմբագրութիւնն իր կողմէ աւելցուցած է Հ. Պ. ազգայնասիրը»:

Ուրեմն այդ Հ. Պ. ստորագրութիւնը անեղծու-

ծայի՞րն բան մըն է. կրնայ նշանակել Հարբիս Պր. Ա. Սալմաստանի կողմէն: Հայ բանասէրի մը անունը:

Պր. Ա. Սալմաստան երկարաշունչ յօդուած մը ուղարկած է մեզի՝ ի պատասխան Անդաստանի բողոք-նամակին: Հարկ չենք տեսներ հրատարակելու:

Նախապէս Պր. Ա. Սալմաստան անտարկելով Հ. Պ. ի գրութեան՝ բաց էր թէ հեղինակի անունն անգամ չէ տուած: Հիմա Անդաստան, իրր մեծ գիւտ մը՝ մեզի կը հաղորդէ թէ Հ. Պ. իր գրութեան մէջ չորս անգամ յիշած է հեղինակին անունը, որ է Հարբիս Պր. Ա. Սալմաստան: Բայց Անդաստանի խմբագրութիւնը անշուշտ չափ լաւ գիտէ թէ Հարբիս Պր. Ա. Սալմաստանի անունը ուսումնասիրութեան հեղինակն է. մինչ բանագործութիւնը - եթէ կատարուած է - այդ ուսումնասիրութեան մասին լոյս տեսած գրախօսականին վրայէն կատարուած է. գրախօսականի հեղինակն է Քանթինոյ. եւ ահա այդ Քանթինոյի անունն է որ չի տար Հ. Պ.:

Արդեօք Անդաստանի խմբագիրը կ'ուզէ բառախաղի՞ զիմեւ հարցը լուծելու կամ... աւելի կ'ընդունի իր համար:

Ամէն պարագայի մէջ, կ'իմանանք որ խմբագրութիւնն ինք է որ աւելցուցած է այդ Հ. Պ. ստորագրութիւնը. իրականին մէջ՝ Հ. Պ. անստորագիր զրկուած է այդ յօդուածը, որ արդարացիօրէն գրախօսականի մը թարգմանութիւնն է, անշունչ ընդլայնումներով, քրոնիկի նպատակով զրկուած:

Եւ Անդաստանի պատուարժան Խմբագրութիւնը այսօրոյն յայտարարելէ վերջ՝ այդ նամակին երկու էջերը կրնար տրամադրել աւելի շահաւէտ նիւթի մը:

ԽՄԲ.

## ԵՒԿԼԻԴԵՍԻ

« ՏԱՐԵՐԻ ԵՐԿՐԱԶՍՓՈԹԵԱՆ » ԳՐԻԻ  
ՀԱՅԵՐԷՆ ՆՈՐԱԳԻՏ ՄԷԿ ԶԵՌԱԳԻՐԸ

Շատ վաղուէն մեր նախնիք թարգմանած ըլլալու են Եւկլիդէսի հանրածանօթ Տարբիք Երկրաչափութեան գործը, որ ամենակարեւորն ըլլալու էր հայ հին ճարտարապետներուն գործածած գիրքերուն մէջ:

Դժբախտաբար ցարդ միայն չորս ոչ ամբողջական ձեռագիրներ հասած են մեզի, որոնցմէ մին է Պաւլոյի (Իտալիոյ) թիւ 178 (Fondo. Aldini), Տիւրինիէի թիւ 74ը, Վենետիկի Միսիթարեանց օրինակը եւ Երեւանի Մատենադարանին թիւ 4166ը: Ասոնցմէ հնագոյնը հաւանաբար ԺԳ. դարէն ըլլալու է: Դժբախտաբար ասոնցմէ ոչ մէկը կը յիշէ թարգմանիչին ու ըլլալը: Ընդհանրապէս Գրիգոր Մալաքիան կը վերագրուի թարգմանութիւնը, սակայն կան ալ որ Անանիա Շիրակացիին կու տան այդ պատիւը: Իսկ Հ. Ալիքեան՝ Անանիա Շիրակացիի ուսուցիչն է՝ հայագէտ Տիւրինոյ յոյնի կ'ուղէ վերագրել թարգմանութիւնը:

Դժուար է խորհիլ որ մինչեւ Մալաքիան սպասէին հայ ճարտարապետները՝ Եւկլիդէսի գործին թարգմանութեան համար, երբ է. դարուն արդէն ունէին Շիրակացիի ազիւսակները:

Սակայն հայ գիտնական մը, եղած թարգմանութեան նոյնիսկ Եւկլիդէսի գործին ըլլալուն մասին տարակոյս կը յայտնէ: Արիդոնայի Համալսարանի ուսուցչան է՝ Արմենակ Ա. Շաղոյեան կը պետենէն՝ Արմենակ Ա. Շաղոյեան կը խորհի որ մեզի հասած այս երկրաչափական հատակոտորները ցոյց կու տան, որ նախա-Եւկլիդէսեան երկրաչափական գործէ

մը առնուած են, հաւանաբար Լեոնի կամ Թեալիոս Մադենիացիի Երկրաչափական գործէն՝ այժմ բնագիրը կորսուած: Շաղոյեան վերագրեցնէ նաեւ որ հայերէն թարգմանութիւնը կատարուած է գուցէ նոյնիսկ Ե. դարուն:

Հոս նպատակ չունիմ աւելորդ տեղ երկարելու այս մասին: Իմ նպատակն է ներկայացնել Եւկլիդէսի վերագրուած Երկրաչափութեան նորագիւտ հայերէն ձեռագիր մը:

Ասկէ քանի մը տարի առաջ Պոլսէն ինծի զրկուած շարք մը հին հայերէն ձեռագիրներուն մէջ էր նաեւ կիսակաշիւ-լաթակազմ (կազմուած Պոլիս Հ. Մատթէոսեան կազմատունը, Ամերիկեան Խան հաստատուած): Ծաւալը 6,1/4 8,1/4, նիւթը վալլուն ողորկ եւրոպական թուղթ: Գրութիւնը միասին, ընտիր նոտրգիր սեւ մեկնումով: Ունի 273 թուղթ եւ վերջին կազմարարէն երկուական թուղթ պահպանակ՝ սկիզբն ու վերջը:

Ձեռագիրը, որ խնամքով գրուած է, դժբախտաբար չունի յիշատակարան կամ որ եւ է յիշատակութիւն ե՛րբ գրուած ըլլալու կամ որմէ՛ եւ ո՛ւր: Ո՛չ ալ վայ որ եւ է խորագիր ե՛րբ, որմէ՞ կամ ի՞նչ լեզուէ թարգմանուած ըլլալու է: Գրչութիւնը հաւանաբար ԺԸ. դարուն կատարուած ըլլալու է:

Իւրաքանչիւր էջ եռագիծ եւ ոսկեզարդ շրջանակի մէջ նկարուած է, որմէ զուրս՝ լուսանցքի վրայ յաճախ կարմիր նոտր գրչութեամբ նշանակուած է ձեւ եւ թիւ եւ երբեմն ալ Թուղթ թիւ մը եւ ձեւ եւ

1. A Pre-Euclidean Fragment of the Elements, by Allen A. Shaw of University of Arizona, in the Bulletin of American Mathematical Society, Vol. 43, pp. 774, also in National Mathematics Magazine, vol. XIII, No. 2, November 1938.

thematical Society, Vol. 43, pp. 774, also in National Mathematics Magazine, vol. XIII, No. 2, November 1938.